

ՇԵՋԵՂ ԲԱՂԱՋԱՅԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԻՍԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ  
ՀՆՋՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՄԱՅԱ ԽԱՋԱՏՐՅԱՆ

Հայ լեզվաբանության մեջ կիսաշփական և շնչեղ բաղաձայնների դասակարգման հարցում մինչև այժմ էլ գերիշխում է այն կարծիքը, որ դրանք բարդ հնչյուններ են<sup>1</sup>: Դրանով իսկ բաղաձայնների արտաբերման դասակարգման հարցում, բացի արտաբերման տեղից ու եղանակից, ընդունվում է ևս մի սկզբունք, որով բաղաձայնները բաժանվում են պարզ և բարդ հնչյունների: Առաջինների թվին են դասվում այսպես կոչված «մաքուր» պայթականները՝ պ-ն, տ-ն, կ-ն ու բ-ն, գ-ն, դ-ն, իսկ երկրորդների թվին՝ շնչեղ բաղաձայնները՝ (փ, ք, լ) և բոլոր կիսաշփականները (ծ, ճ, ց, շ, ծ, ջ): Ահա ինչ է գրում այդ մասին Մ. Աբեղյանը. «Բարդ բաղաձայնները կազմվում են երկու կամ երեք հնչյունի այնպիսի բաղադրությունից, որի մեջ երկու հնչյունը մեկ արտաբերությամբ են առաջանում և ձայնաբանորեն իբրև մեկ հնչյուն են ըմբռնվում: Դրանք երկու տեսակ են՝ հազագավոր և կրկնակ բաղաձայններ»<sup>2</sup>:

Նշենք, որ այս կարծիքը, որի կողմնակիցներն են հին ու միջին սերնդի հայագետները, արտացոլում է մեր դարի սկզբներում լայն տարածում գտած այն տեսակետը, որը կազմավորման բարդությունը նույնացնում է հնչյունների գումարին: Այլ կերպ ասած՝ դրանց վերաբերյալ կիրառվում են հետևյալ հավասարությունները՝ փ=պ+հ, թ=տ+հ, ք=կ+հ, ց=տ+ս և այլն: Այս դասակարգման էությունը հասկանալու համար փորձենք քննել այդ հարցը նախ պատմական մոտեցմամբ:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին երիտքերականների ծաղկման շրջանում հնչյունաբանությունը բուռն զարգացում ապրեց, մի փաստ, որը բացատրվում է լեզվաբանների հետաքրքրությունների շրջադարձով՝ մեռած լեզուներից դեպի կենդանի լեզուները: Լեզվաբանական ուսումնասիրությունների տեսադաշտը սկսում է լայնանալ՝ ընդգրկելով նորանոր կենդանի լեզուներ, հատկապես ոչ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուները: Այս շրջանում էլ սկիզբ առավ փորձառական հնչյունաբանությունը: Տարբեր երկրների լեզվաբանների ջանքերով 1886 թ. հիմնադրվեց ուսուցիչների Միջազգային ընկերությունը, որը հետագայում վերածվեց Միջազգային հնչյունաբանական ընկերության (IPA): Այդ ընկերության հիմնական խնդիրներից մեկն էր՝ տարածել իր իսկ կողմից մշակած հնչյունական այբուբենը, որը կոչված էր նպաստելու օտար լեզուների ուսուցմանը՝ տառադարձության օգնությամբ: Բերենք մի նմուշ հայերենի համար կատարված տառադարձության:

„Hjusisajin khamin jev arevə vitšum ejin the 'vorne irantshitsh aveli uzejə, jerb jerevatsh mi tšanaparhord phathathvats mi takh verarkui medž. vorofetšhin vor, vorə vor arradzine tšanaparhordin hanel kəta ir verarkun, na kəhašvevi aveli uzejə. ajn zamanak phətfhetšhs hjusisajin khamin amboydž jur ušov, baštš 'intshkhan aveli er na phətfhum 'ajəkhan aveli xist er phathathvum tšanaparhordə ir verarkui medž; jev 'verdžapes khamin ajijevəs əfxatelutsh hərazarvetsh. ajn zamanak aregakə phajletsh tšanaparhordə khitš khitš hanetsh ir verarkun; jev 'ajspisov hjusisajin

<sup>1</sup> Բացառություն է կազմում Գ. Ջահուկյանի և տողերիս հեղինակի կարծիքը:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1960, էջ 84:

khamin stipvats jeyav xostovanel vor, arevə iranitsh jerkusitsh amena uzeɣn er<sup>3</sup>.

«Հյուսիսային քամին և արևը վիճում էին, թե որն է իրանցից ավելի ուժեղը, երբ երևաց մի ճանապարհորդ՝ փաթաթված մի տաք վերարկուի մեջ. որոշեցին որ, որը որ առաջինը ճանապարհորդին հանել կտա իր վերարկուն, նա կհաշվ(ե)վի ավելի ուժեղը. այն ժամանակ փչեց հյուսիսային քամին ամբողջ յուր ուժով, բայց ինչքան ավելի էր նա փչում, այնքան ավելի խիստ էր փաթաթվում ճանապարհորդը իր վերարկուի մեջ. և վերջապես քամին այլևս աշխատելուց հրաժարվեց. այն ժամանակ արեգակը փայլեց, ճանապարհորդը քիչ-քիչ հանեց իր վերարկուն. և այսպիսով հյուսիսային քամին ստիպված եղավ խոստովանել, որ արևը իրենց երկուսից ամենաուժեղն էր»:

Տեքստի տառադարձումից երևում է, որ հայերենի համար այն պիտանի չէ, հատկապես շնչեղ բաղաձայնների և կիսաշփականների վերաբերյալ: Այսպես՝ հայ ընթերցողը հակված է կարդալու khami որպես կըհամի (հմմտ. կհանի), բայց այդ դեպքում քամին նույնպես պետք է տառադարձվեր միևնույն ձևով khami կամ լավագույն դեպքում kəhami-khami: Որքանո՞վ է նպատակահարմար bajtsh (բայց) բառում 3 նիշի օգտագործումը ց-ի փոխարեն: Կամ հմմտ. intʃ hkhan (ինչքան) 5 տառ՝ չէ-ի համար: Այստեղ խախտվում են հընչույթների սահմանները, քանի որ հաշվի չի առնվում դրանց գործառնությունը: Այդ այբուբենը՝ հիմնված լինելով որոշակի սկզբունքների վրա և օգտագործելով լատինական տառանշանները, հիմնականում հետապնդում է գործնական խնդիրներ, որոնց թվին են պատկանում լեզուների հնչյունային կառուցվածքի գրանցումը, օտար լեզուների արտասանության ուսուցումը տառադարձության օգնությամբ և այլն:

Միջազգային հնչյունական այբուբենի օգտագործումը արժեքավոր է հատկապես այն լեզուների ուսուցման համար, որտեղ նկատվում է գրության և արտասանության մեծ խզում (ինչպես, օրինակ, անգլերենում):

Նշենք, որ մինչև հիմա էլ անգլերենի շատ բառարաններ օգտագործում են այդ այբուբենը՝ բառի արտասանությունը գրանցելու համար: Հմմտ. օրինակ՝ blood 'արյուն' և bloom 'ծաղկունք' (եթե չլինի տառադարձումը, օտար ընթերցողը չի կարող իմանալ, որ միևնույն օօ տառակապակցությունը առաջին բառում կարդացվում է «ա», իսկ երկրորդում՝ «ու»):

Այսպիսով, միջազգային հնչյունային այբուբենը՝ ամբողջությամբ հիմնված լինելով հնչյունաբանական սկզբունքների վրա, հաշվի չի առնում հընչյունների գործառնական կողմը, այն, թե ինչ գերով են այդ հնչյունները հանդես գալիս յուրաքանչյուր լեզվում: Դրա փայլուն ապացույցն է այսպես կոչված բարդ հնչյունների մեկնաբանումը այդ այբուբենում, որում շնչեղ հպականների (փ, թ, ք), կիսաշփական բաղաձայնների (ծ, ց, ձ, ճ, չ, ջ) և երկբարբառների (ai, oi, ei, ui) մեկնաբանությունը փաստորեն անտեսում է այդ հնչյունների լեզվաբանական կողմը և ներկայացնում դրանք որպես երկու կամ երեք հնչյունների գումար:

Հնչյունաբանական ընկերության աշխատանքի հաշտությունները պայմանավորվում էին գործնական ու փորձառական հնչյունաբանության նվաճումներով, որը և իր հերթին նպաստեց արտաբերական և ձայնաբանական հնչյունաբանության զարգացմանը: Լույս ընծայվեցին եվրոպական տարբեր լեզուների հնչյունաբանության վերաբերյալ դասագրքեր ու ձեռնարկներ, որոնցում մանրամասն նկարագրվում էին հնչյունների արտաբերությունն ու մասամբ՝ ֆիզիկական բնույթը: Շնորհիվ այդ ուսումնասիրությունների մշակվեցին խոսքի հնչյունների նկարագրման ու դասակարգման մի շարք սկզբունքներ, որոնք չեն կորցրել իրենց կարևորությունը մինչև օրս: Սակայն մեր դարի 30—40-ական

<sup>3</sup> „The Principles of the International Phonetic Association“, 1949 (reprinted 1966) London, p. 33—34.

թվականներին ձևավորվեց մի նոր գիտաճյուղ՝ ճնշույթաբանությունը, որն իր էությունով հակադրվեց հնչյունաբանությանը՝ հատկապես այնպիսի հիմնային հարցերում, ինչպիսիք են լեզվի նկատմամբ վերջինիս ունեցած մոտեցումը և լեզվի կառուցվածքի անտեսումը: Հնչյունների մանրակրկիտ նկարագրությանը հնչույթաբանները հակադրեցին լեզվի համակարգային նկարագրության սկզբունքները, ընդգծելով հնչյունների գործառական (ֆունկցիոնալ) կողմի հաշվառման անհրաժեշտությունը: Տարբեր երկրների լեզվաբաններ, այդ թվում նաև Պրագայի լեզվաբանական խմբակի ներկայացուցիչները, ձեռնամուխ եղան լեզուների կառուցվածքային նկարագրությանը: Սակայն, իրենց դրական հայտարարություններում այդ ուսմունքի ներկայացուցիչները հասան ծայրահեղության՝ հնչյունաբանությունը հայտարարելով լեզվաբանության և, մասնավորապես, լեզվի կառուցվածքային նկարագրության հետ ոչ մի կապ չունեցող մարդկագիտական գիտություն:

Այսպիսի պայմաններում հասկանալի է դառնում, որ ավանդական և հընչույթաբանական ըմբռնումների տարբերությունը վերաբերում է լեզվի հընչյունների նկարագրական և նրանց գործառական մեկնաբանումներին: Ավանդական հայեցակետի ներկայացուցիչները հնչյունների դասակարգման հիմքում դնում են արգելքի տեսակը: Այս առումով կիսաշփականները իսկապես ներկայացնում են երկու տիպի արգելքի միացություն՝ հպում և ճեղք: Սակայն, ինչպես ցույց են տալիս փորձերը<sup>4</sup>, նույնիսկ այս դեպքում կիսաշփականները կարելի է միայն նմանեցնել, բայց ոչ նույնացնել երկու հնչյունների գումարին: Մուտքի և ելքի պահերի հարաբերությունը, նրանց ընդհանուր տևողությունը չի խոսում այդ հնչյունների երկհնչյունության-օգտին: Մինչդեռ այդ հնչյունների մեկնաբանման հարցում մենք հիմնվում ենք դրանց ոչ միայն հնչյունական, այլև գործառական կողմի վրա, հատկապես այն հիմնական կանոնների հաշվառման վրա, որոնցով առանձնանում են յուրաքանչյուր լեզվի մենահնչույթները երկհնչույթներից:

Քննենք հայերենի կիսաշփականներն ու շնչեղ բաղաձայնները (հազագավորները)՝ վերոհիշյալ կանոնների կիրառմամբ<sup>5</sup>:

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆ. Երկու հնչյունների զուգակցությունը պետք է համարվի մեկ հնչույթի իրականացում, եթե դրա մասերը չեն բաժանվում երկու վանկերի, այսինքն՝ չեն տարրալուծվում: Այսպես՝ կոճեղ բառի ճ-ն (եթե ընդունենք ավանդական մոտեցումը, որի համաձայն ճ-ն բաղկացած է տ+շ-ից) չի տարրալուծվում և չի բաժանվում տարբեր վանկերի, այլ, ընդհակառակը, այն անցնում է հաջորդ վանկին ամբողջությամբ, ինչպես ամեն մի պարզ բաղաձայն: Նման ձևով է իրեն դրսևորում ց կիսաշփականը, որն, ըստ ավանդական մեկնաբանության, բաղկացած է մեկ հազագավոր թ-ից և ո-ից կամ տ+ս+հ-ից: Օրինակ՝ կա-ցիւն, բայց ոչ կաթ-սիւն կամ կաաւ-սիւն: Բերենք մի օրինակ, որտեղ կիսաշփականը հակադրվում է իր ռադադրամասերին՝ կազմելով հակադրություն: Օրինակ՝ կաաւեր բառում ա-ն ու ս-ն հանգես են գալիս որպես առանձին միավորներ և տարրալուծվում են տարբեր վանկերի՝ կըւ-աւ-եր, իսկ կըծեր բառում այն չի բաժանվում տարբեր վանկերի և ընկալվում է որպես մենահնչույթ:

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՆՈՆ. Հնչյունախումբը համարվում է մեկ հնչույթի իրականացում, եթե այն արտաբերվում է մեկ ճիգով՝ կամ ուժեղացումով, կամ թուլացումով: Այս սկզբունքը ավելի շատ վերաբերում է երկբարբառներին: Սակայն կիսաշփականները և շնչեղ պայթականները նույնպես արտաբերվում են մեկ ճիգով՝ լարումի թուլացմամբ:

ԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ. Հնչյունախումբը համարվում է մեկ հնչույթի իրականացում, եթե տևողությամբ այն չի գերազանցում մյուս հնչույթներին: Փորձառա-

<sup>4</sup> Н. С. Трубецкой, Основы фонологии, М., 1960, с. 62—68.

<sup>5</sup> А. А. Хачатрян, В. Н. Айрапетян, Экспериментальное исследование согласных фонем литературного армянского языка, Ереван, 1971, с. 69, 87 и др.

կան տվյալների համաձայն, հայերենի շնչեղներն ու կիսաշփականները շատ աննշան են տարբերվում պայթականներից ու շփականներից: Այսպես՝ տ-ի միջին տեղում թյունը բառամիջում երկվանկ բառերում հավասար է 108 մ/վրկ, ալ-ինը՝ 76, իսկ ց-ինը՝ 94: Շնչեղ բաղաձայնների տեղում թյունը մոտ 10—20 մ/վրկ երկար է ոչ շնչեղներից, սակայն փ, թ, ք-ի հպման պահը շատ կարճ է, իսկ շփման պահը՝ 2—3 անգամ երկար ալ, տ, կ-ի համեմատությամբ: Այլ կերպ ասած, այդ երկու խմբերի միջև գոյություն ունի արտասանական պահերի հակառակ հարաբերություն:

ՉՈՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ. Եթե հնչյունախումբը բավարարում է առաջին երեք պայմաններին և հանդիպում է այնպիսի դիրքերում, որտեղ տվյալ լեզվի կանոնների համաձայն բաղաձայն հնչյունների զուգակցումը բացառվում է, ապա այն պետք է համարվի մեկ հնչույթի դրսևորում:

Հայերենի ռառասկզբի կանոնի համաձայն երկու բաղաձայն հնչյուններ (մանավանդ պայթական+շփական) չեն կարող հանդիպել բառասկզբում, մինչդեռ, կիսաշփականներով ու շնչեղներով սկսվող բառերը բազմաթիվ են: Բառասկզբի որոշ բաղաձայնների կապակցությունների առկայությունը ժամանակակից հայերենում (սպ-, ստ-, սկ— շպ, սք, սք) չի հակասում այս կանոնին, քանի որ գրանցում զուգակցվում են այնպիսի հնչյուններ, որոնք չեն կարող կազմել կիսաշփական կամ շնչեղ հնչյուններ: Հետևաբար՝ պայթական+շփական բառասկզբի «հնչյունախմբեր» պետք է համարվեն մենահնչույթներ: Օրինակ՝ տառ, ճառ, թառ, փառ, քար, բայց ոչ՝ տհաճ, դժկամ, տհաս (հմտ. թաս), տշել:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ. Եթե հնչյունախումբը բավարարում է առաջին երեք կանոններին և բխում է տվյալ լեզվի ամբողջ համակարգից, ապա այն պետք է համարել մենահնչույթ: Հայերենի շնչեղները և կիսաշփականները կազմում են հարաբերական զուգահեռ շարքեր՝ միավորվելով արտաբերական տեղի ու եղանակի հատկանիշներով և տարբերվելով միմյանցից մեկական հատկանիշով. բ—պ—փ, դ—տ—թ, գ—կ—ք, ձ—ծ—ց, շ—ճ—չ:

ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ. Եթե հնչյունախմբի բաղադրիչը չի կարող մեկնաբանվել որպես որևէ այլ հնչույթի դիրքային տարբերակ, ապա ամբողջ խումբը պետք է համարվի մենահնչույթի արտացոլում: Քննվող հնչյունախմբերի և ոչ մի տարր չի կարող համարվել մեկ այլ հնչույթի տարբերակ, քանի որ նրանց տարրերը հստակորեն տարբերվում են համապատասխան հնչույթներից թե՛ տեղում, թե՛ քաղցր, որակով, ուստի և պետք է դիտվեն որպես մենահնչույթներ:

Կիսաշփականների ու երկբարբառների հնչույթային մեկնաբանման հարցում Ի. Ռեզինը<sup>6</sup> առաջարկում է մեկ այլ չափանիշ, որը, փաստորեն, հիմնված է ձևաբանական գործոնի հաշվառման վրա: Նա գտնում է, որ եթե երկու հնչյունների միջև հնարավոր է մտցնել մի միջանկյալ հնչյուն և դրանից բառի ընկալումը չի փոխվի, ապա այդ երկու հնչյունները տարբեր հնչույթներ են: Օրինակ՝ պառառ բառում հնարավոր է տ-ի և շ-ի միջև արտասանել ը ձայնավորը և ստանալ պառը շաբող կապակցությունը և դրանից իմաստը չի փոխվի: Սակայն նույնը չի կարելի անել պատճառ բառի ճ-ի հետ: Ռուսերենի ДЖЕМ բառը կարելի է արտասանել [դըժեմ], և ռուսները հաճախ այդպես էլ արտասանում են՝ ներմուծելով ը-անման մի հնչյուն դ-ի ու ժ-ի միջև: Դրանից բառի իմաստը չի փոխվում, ուրեմն՝ դրանք տարբեր հնչույթներ են ռուսերենում. իսկ հայերենում ջեմ բառի ջ-ն չի կարելի բաժանել ը-ով, ուստի այն մենահնչույթ է:

Այսպիսով՝ հայերենի կիսաշփականներն ու շնչեղները բավարարում են մենահնչույթության բոլոր պայմաններին և պետք է դիտվեն որպես այդպիսիք:

<sup>6</sup> И. И. Резин, Критерии монофонемности или бифонемности сегмента («Тезисы докладов на VII Международном конгрессе фонетических наук», М., 1977, с. 221—222).

Ինչ վերաբերում է նրանց կազմավորման եղանակին, ապա մուտքի պահով կիսաշփականները նմանվում են պայթականներին, իսկ ելքի պահով՝ շփականներին, քանի որ հսկումը դրանցում դանդաղորեն վերածվում է ճեղքի՝ նմանվելով շփականներին: Ուրեմն՝ տարբերությունը պայթականների ու կիսաշփականների միջև արգելքի հաղթահարման մեջ է. պայթականների ժամանակ այն պոռթկումի ձևով է, իսկ կիսաշփականների ժամանակ՝ սառնուն: Վերջիններիս արտաբերման պահերի նմանեցումը առանձին հնչյունների, փաստորեն, հարցի ոչ գիտական լուծում է՝ թելադրված գործնական նպատակներով:

Կարող են առարկել, որ ոչ ոք չի կասկածում, որ հայերենում կիսաշփականներն ու շնչեղները ինքնուրույն հնչույթներ են և ունեն իրենց համապատասխան գրային նշանները, տառերը: Սակայն հարցը այդքան պարզունակ չէ: Հնչույթային համակարգի նկարագրության բացակայության պայմաններում, երբ հնչյունները քննվում են որպես հնչույթների համարժեքներ, վերջիններիս նկարագրությունն ու դասակարգումը ըստ բաղադրության սկզբունքի դառնում է նաև հնչույթների հատկանիշ, մասնավորապես, որ ընդհանուր դասակարգման տարիտակներում դրանք չեն բնութագրվում ոչ ըստ տեղի, ոչ էլ ըստ եղանակի՝ համարելով դրանց երկու կամ երեք հնչյունների գումար: Նույնը վերաբերում է և շնչեղ բաղաձայններին, որոնք համարվում են բաղկացած մեկ պարզ խուլից և մեկ հազագից: Որպես ապացույց այդ հնչյունների բարդության՝ բերվում է մի քանի օրինակ, որտեղ ա-ի ու հ-ի միացումը շարակարգում հանգում է շնչեղ հնչյունների գոյացման: Օրինակ՝ սեպուճախան բառից ստացվել է սեփախան բառը: Սակայն կարելի է բերել շատ օրինակներ, որտեղ ձայնեղ պայթականները վերածվել են շնչեղ խուլների՝ առանց հ-ի ներկայության. օրինակ՝ ընդառժակ արտասանվում է (ընթարցակ), ընդամենը (ընթամենը), ընդօրինակել (ընթորինակել): Իսկ կիսաշփականների առաջացման հիմնական աղբյուրը, ինչպես վկայում է Գ. Զահուկյանը<sup>7</sup>, առաջին և երկրորդ քմայնացումներն են:

Ժամանակակից հնչույթաբանության տեսանկյունից հնչույթների բաժանումը պարզերի և բարդերի՝ չի արդարացվում: Յուրաքանչյուր լեզվի հնչույթները ոչ միայն արտաբերվող հնչյուններ են, այլ որոշակիորեն կազմակերպված և միմյանց հետ հարաբերակցված միավորներ, որոնք միասին կազմում են մի ամբողջական համակարգ: Այդ համակարգի յուրաքանչյուր անդամ գտնվում է որոշակի հարաբերության մեջ մյուս անդամների հետ՝ բազմակի, զուգահեռ և առանձնակի (привативная оппозиция): Որևէ մեկ անդամի կորուստը կամ փոփոխումը անխուսափելիորեն ազդում է մյուս անդամների վրա՝ առաջացնելով մյուս անդամների տեղաշարժ: Այդ տեսակետից հետաքրքիր տվյալներ են տալիս հայերենի բարբառները. եթե որևէ բարբառում բաղաձայնական զուգահեռ շարքերից բացակայում է որևէ մեկ անդամը, ապա, ամենայն հավանականությամբ, բացակայում են նաև մյուս շարքերի համապատասխան անդամները: Օրինակ, եթե բ—պ—փ շարքում բացակայում է պ-ն, ապա նույն բարբառում կբացակայի նաև տ-ն, կ-ն, ծ-ն ու ճ-ն: Համակարգի այս օրինաչափությունը ավելի շատ հանդիպում է արևելյան տարածքի բարբառներում: Այսպիսով՝ յուրաքանչյուր անդամ պայմանավորված է համակարգի մյուս անդամներով և գտնվում է նրանց հետ բազմապիսի կապերի մեջ:

## ФОНОЛОГИЧЕСКАЯ ТРАКТОВКА ПРИДЫХАТЕЛЬНЫХ И АФФРИКАТ АРМЯНСКОГО ЯЗЫКА

АМАЛЯ ХАЧАТРЯН

### Резюме

Придыхательные согласные и аффрикаты (փ, թ, ք, մ, ճ, ց, չ, ձ, ջ) армянского языка в традиционной арменистике рассматриваются как

<sup>7</sup> Г. Б. Джаукян, Общее п армянское языкознание, Ереван, 1973, с. 221, 222.

сложные звуки, состоящие из одного взрывного и фриктивного. Такая трактовка этих фонем восходит к концепциям Международной фонетической ассоциации (МФА), алфавит которой был создан для практических целей преподавания иностранных языков и фактически игнорировал функциональную значимость звуков речи в каждом конкретном языке. С фонологической точки зрения они должны считаться минимальными элементами языка, служащими для различения слов и морфем. С фонетической точки зрения это звуки, в которых смычка замедленно переходит в щель того же места образования, что никак нельзя приравнять сумме двух звуков.